ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԵԾ ՊԱՀՔԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻԻՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

(22 մարտի, 2020 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,

Այսօր Մեծի պահոց հինգերորդ կիրակին է, որ անվանվում է Այրի կնոջ եւ Անիրավ դատավորի կիրակի։ Իհարկե, հայտնի հիվանդության վարակի հետեւանքով ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանում ոչ սովորական ընթացքով է կազմակերպվում մարդկանց կյանքը, եւ մեր եկեղեցին նույնպես զերծ չի մնացել այդպիսի պայմաններին հարմարվելուց. այսօր պաշտամունքը մեր եկեղեցիներում մատուցվում է առանց հավատացյալների՝ փորձելով նրանց հոգեւոր կարիքները հոգալ ժամանակակից՝ հեռահաղորդակցության միջոցներով։

Ուրախ եմ փոխանցելու ձեզ Նորին Սրբության օրհնությունը, ողջույնները, աղոթքները՝ մաղթելով ուժ, կարողություն, այս փորձություններով լի ժամանակաշրջանում՝ ամրություն եւ զորություն՝ հաղթահարելու համար առկա դժվարությունները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններիս, բոլոր հոգեւորականներիս աղոթքները, զորակցության մաղթանքը մեզ համար այս չափազանց լարված եւ դժվարին իրավիճակում։

Հետաքրքրական է, որ այսօր, նախախնամաբար, մեր եկեղեցում սահմանված ընթերցվածների շարքում մեր ուշադրությունը, մեր հայացքները սեւեռվելու են հոգեւոր կյանքի կատարելագործման համար կարեւորագույն մի թեմայի՝ աղոթքին։ Առակը՝ սուրբգրային հատվածը, որն այսօր մեր հայրերը նախատեսել են որպես խորհրդածության նյութ, նվիրված է աղոթքի բացահայտմանը, աղոթքի մեկնաբանությանը եւ աղոթքի կարեւորության ընդգծմանը հոգեւոր կյանքում։ Ահա աղոթքի մասին իր պատգամները փոխանցելու համար Քրիստոս Աստված,

ինչպես հաճախ պատահում էր, դիմում է առակի օգնությանը։ Նա պատմում է մի առակ՝ այրի կնոջ եւ դատավորի մասին, եւ այս համաբանությամբ ընդգծում աղոթելու կարեւորությունը։

Առակը հետեւյալն է։

Կար մի քաղաք։ Այդ քաղաքում արդարադատությունն իրականացնում էր մի դատավոր, որը չափազանց վատ համաբավ ուներ։ Մարդկանցից չէր ամաչում եւ Աստծուց էլ չէր վախենում։ Ահա այս դատավորին դիմում է այրի մի կին՝ խնդրելով արդարադատություն իրականացնել իր եւ իր հակառակորդի միջեւ։ Դատավորը մշտապես անտեսում է այրի կնոջ խնդրանքը, բայց մի օր, երբ այլեւս ձանձրացել էր, հոգնել այս կնոջ խնդրանքներից, ինքնիրեն մտածում է. «Այլեւս բավ է՝ այս կինն ինձ ձանձրացնի, բավ է հոգիս հանի, լավ կլինի՝ ես այս կնոջ խնդիրը լուծեմ, եւ նա հրաժարվի ինձնից»։ Եւ, վերջիվերջո, կնոջ խնդրանքին ընդառաջում է։ Ահա այստեղ Քրիստոս, այս առակին՝ որպես ընդհանրացում, ասում է. «Իսկ Աստուած արդարութիւն չի՞ անի Իր այն ծառաներին, որոնք գիշեր եւ ցերեկ աղաղակում են. եւ նրանց հանդէպ միայն համբերատա՞ր կլինի» (Ղուկ. ԺԸ. 7)։ Առակով Քրիստոս պատգամում է. «Հարկ է միշտ աղոթել եւ չձանձրանալ» (Ղուկ. ԺԸ. 1)։

Իհարկե, աղոթքը հոգեւոր կյանքի անբաժանելի մասն է։ Իհարկե, ամեն մարդ, ընդունի թե չընդունի, լինի հավատացյալ թե անհավատ, ներքին համոզում ունի, որ աղոթում է։ Երբեմն մարդիկ ամենազոր թվալու փափագով կամ պատրանք ստեղծելու նկատառումով փորձում են ներկայացնել, որ իրենք հեռու են աղոթելուց, բայց այնտեղ, ուր ավարտվում են մարդկային ուժը, մարդկային զորությունը, մարդկային կարողությունը, այդտեղ սկսվում են Ամենազորին դիմելու ցանկությունն ու անհրաժեշտությունը։ Հետեւաբար չկա մարդ, որ չաղոթի։

Իհարկե, ընթացիկ կյանքում, երբ մենք մեզ համարում ենք հաջողակ, զորեղ, զանազան հոգսերի տակ չկքած, մենք մեզ համար երբեմն-երբեմն ստեղծում ենք, այսպես կոչված կենցաղային աստվածներ. ոմանք հաջողությունն են պաշտամունքի առարկա դարձնում, ոմանք՝ հասարակական դիրքը, ոմանք՝ հարստությունը, ոմանք՝ հաճույքները, բայց կյանքի ծայրահեղ լարված իրավիճակներում մեր հայացքները կրկին Աստծուն ենք ուղղում, քանզի գիտենք, որ այդ, այսպես կոչված, կենցաղային աստվածները ոչնչով չեն կարող մեզ օգնել։

Իսկ ինչպե՞ս աղոթել, ի՞նչ է նշանակում աղոթել։

Ես կուզեի առանձնացնել աղոթքի մի քանի առանձնահատկություն, որոնք արտահայտվում են մեր ուղղափառ, հոգեւոր մտածողության մեջ։

Աղոթել նշանակում է վստահել։

Հետաքրքիր է, որ «աղոթել» բառը, որը միաժամանակ «խնդրել» է նշանակում, ինչպես ձեզ հայտնի է, օգտագործվում է միայն այն դեպքերում, երբ խնդրանքն ուղղված է Աստծուն։ Եւ երբ մենք աղոթում ենք, մենք արտահայտում ենք մեր հավատքն առ Աստված։ Մենք ճանաչում ենք ոչ միայն Աստծու գոյությունը, ոչ միայն այն փաստը, որ Աստված է ստեղծել մարդկանց, երկինքը, երկիրը եւ այն ամենը, ինչ գտնվում է նրանում, այլ մենք ճանաչում եւ հռչակում ենք այն փաստը, որ Աստված կարող է ներգործել մեր կյանքում, Աստված կարող է ազդել այն իրադարձությունների, երեւույթների վրա, որոնք տեղի են ունենում մեզ հետ եւ մեր շրջապատում։ Եւ, հետեւաբար, աղոթելը Աստծու գոյության եւ Նրա ներգործության վկայություններից մեկն է։

Աղոթել նշանակում է մտածել ինչպես Աստված։

Իհարկե, սա փոքր-ինչ տարօրինակ է հնչում, բայց աղոթքի միջոցով է, որ մենք պահում ենք կապը Աստծու եւ հավերժության հետ։ Առանց աղոթքի, առանց Աստծու հետ մեր կապը պահելու՝ մենք ընդամենը կլինենք այնպիսի էակներ, որոնց կյանքը սահմանափակվում է երկրավոր տիրույթում։ Ամեն մեկիս առջեւ, ուզենք թե չուզենք, մի օր ծառանալու է հարցը՝ որն է կյանքի նպատակը։ Արդյոք կյանքի նպատակը երկրավոր այս սահմանափակ տարիներն են, թե մեր կյանքը ձգվում է մահվանից անդին։

Իհարկե, ամենօրյա վազվզոցի, տագնապների, շտապողականության մեջ միշտ չէ, որ մենք կարող ենք այս հարցին պատասխանել, բայց, իհարկե, գալու է այն օրը, երբ մենք ստիպված ենք լինելու պատասխանել այդ հարցին։ Կյանքը երկրավոր տեւողությամբ է միայն օժտված, թե՞ նրա սահմանները ձգվում են երկրավոր կյանքից անդին։

Եւ աղոթքն ահա գալիս է ոչ միայն բարելավելու մեր երկրավոր կյանքը, այլեւ առավելապես երկնայինը, մեր փրկությունը, հավերժության հետ մեր կապը։

Աղոթել նշանակում է ձերբազատվել կանխատրամադրվածություններից։

Ինչ է սա նշանակում։

Երբեմն մեզ թվում է, թե մեր ամեն մի աղոթք ուղիղ պատասխան պիտի ստանա։ Տե՛ր Աստված, Քեզնից ունեմ այս խնդրանքը, եւ պիտի

կատարես այն։ Ահա այս ձեւակերպումը բացարձակ խորթ է աղոթքի ընկալմանը, աղոթքի էությանը։ Ժամագրքում՝ առավոտյան ժամերգության աղոթքի մեջ, մենք ասում ենք. «Տե՛ր Աստված, մենք խնդրում ենք Քեզ, քանի որ Դու Ինքդ ավելի լավ գիտես մեր կարիքներն ու պետքերը, քան ինքներս գիտենք այդ մասին»։ Ուրեմն պետք է ձերբազատվել այն պատկերացումներից, այն կանխատրամադրվածությունից, որ ցանկացած բան, ինչ մենք խնդրում ենք Աստծուց, լավագույնն է, որ մեզ պիտի տրվի։

Հովհան Ոսկեբերանն ասում է՝ միշտ չէ, որ Աստված իրագործում է մեր աղոթքները, խնդրածները, բայց դրանք չեն իրագործվում այն պատճառով, որ դա չէ, որ մեզ անհրաժեշտ է, եւ Աստված դա ավելի լավ գիտի։ Եւ չստանալով մեր խնդրանքների պատասխանը՝ մենք ավելի մեծ պարգեւ ենք ստանում Աստծուց։ Ստանում ենք այն, ինչ, իրոք, անհրաժեշտ է եւ օգտակար։

Առանձնահատկությունը, սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, որով ուզում եմ կիսվել ձեզ հետ, աղոթքի մեջ կենտրոնանալու եւ ամբողջապես առանձնանալու դրույթն է։

Իհարկե, չափազանց դժվար է կենտրոնանալ, չափազանց դժվար է կյանքի հարահոսից կտրվել, դադարեցնել վազքը, հեւքը, բայց երբ Քրիստոս մեզ կոչ է անում. «Այլ դու, երբ աղօթես, մտի՛ր քո սենեակը, փակի՛ր քո դռները եւ ծածո՛ւկ աղօթիր քո Հօրը» (Մատթ. Զ. 6), սա ընդամենը ցուցադրականությունից հրաժարվելու մի պատգամ չէ։ Սա ավելին է, քան ցուցադրականությունից հրաժարվելը։ Սա Քրիստոսի շուրթերով պատգամում է ավետարանիչը, որ կենտրոնանանք, ամբողջապես ձերբազատվենք առօրյա հոգսերից, մտազբաղումներից, մտագրոհումներից, պատրանքներից ու երեւակայության արշավներից։ Զտարվենք կողմնակի զրույցներով՝ Աստծու հետ զրույցի համար։ Աստծու հետ զրույցի համար պետք է ունենալ լիարժեք ազատ միտք եւ հոգի, եւ այդ ժամանակ մեր աղոթքն ու մեր զրույցը կստացվեն։

Ուրեմն՝ սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, ամփոփելով ասենք, որ աղոթել նշանակում վստահել, աղոթել նշանակում է ճանաչել ոչ միայն Աստծու գոյությունը, այլ նաեւ Նրա ներգործելու կարողությունը, աղոթել նշանակում է հրաժարվել կանխատրամադրվածություններից եւ աղոթել նշանակում է պահել կապը հավիտենության հետ՝ փրկության համար։ Այս աշխարհի վախճանից հետո՝ մարդկային կյանքի վախճանից հետո, պահպանել կյանքը՝ հավերժության համար։

Իհարկե, այս բացատրություններն աղոթքի համար բավարար չեն թվա բոլոր նրանց, ովքեր ինչպես ժամանակին, այնպես եւ այսօր աղոթքը համարում են միջնադարյան մի սովորություն։ Աղոթող մարդուն անվանում են ոչ գործնական, աղոթելը՝ սեփական անգործությունը քողարկելու միջոց։

Իհարկե, ոչինչ չենք կարող պատասխանել այսպիսի անձանց, նրանց կյանքն ինքը կպատասխանի։ Կպատասխանի այն ժամանակ, երբ ստիպված կլինեն իրենց անզորության, իրենց տկարության պատճառով փնտրել վերնային, երկնային Տիրոջ զորակցությունն ու օգնությունը։

Ուրեմն՝ այս ըմբռնումով, այս ընկալումով, սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, այրի կնոջ նման, որ իր խնդրանքներով մշտապես դիմում էր անիրավ դատավորին, այրի կնոջ նպատակասլացությամբ, համառությամբ, հետեւողականությամբ ու համոզվածությամբ շարունակենք դիմել Աստծուն։ Դիմենք Աստծուն մեր խնդրանքներով, մեր մտահոգություններով, մեր հոգսերով, մեր զբաղումներով։ Դիմենք՝ երբեք չընկրկելով, չհուսահատվելով, երբ մեր խնդրանքներին մեր ցանկացած պատասխանը չի տրվում, որովհետեւ մենք գիտենք, որ Աստված ավելի լավ գիտի մեր կարիքներն ու պահանջները, մեր անհրաժեշտությունները, քան մենք ինքներս։

Հետեւաբար այս աղոթքով, այս զգացումով վերստին դիմենք Աստծուն եւ խնդրենք Տիրոջ օգնականությունը հատկապես այս օրերին, երբ ինչպես շատ ժամանակ թվում է, թե մարդկային ջանքերը, մարդկային կարողությունները ի վիճակի չեն հաղթահարելու այդպիսի փորձությունները։ Մարդկային բոլոր կարողություններով ու հմտություններով հանդերձ՝ հսկայական է այն տարածքը, որտեղ կարող է գործել միայն եւ միայն Աստված։ Սա, իհարկե, չի նշանակում թերագնահատել մարդկային կարողությունները, գիտելիքները, նվաճումները, այլ մղում է ապավինել Աստծու հաջողությանը, Աստծու աջակցությանը, որովհետեւ եթե Աստված, ինչպես Սուրբ Գրքում է ասված, չօրհնի այն տունը, որը կառուցվում է, իզուր է այդ տունը կառուցողների վաստակը։ Աստված պիտի օրհնի մեր նախաձեռնությունները, ծրագրերն ու գործողությունները։

Եւ թող Աստված օրհնի ամենքիս այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն։